ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԳԱՐԻԿ ԳԱԳԻԿԻ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑ ԶԻՆՇԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ
հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՄԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2025

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝	հոգեբանական գիտությունների թեկնածու **Լևոն Կարոյի Սարգսյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	հոգեբանական գիտությունների դոկտոր **Նաիրա Ռաֆիկի Հակոբյան**
	հոգեբանական գիտությունների թեկնածու **Զարզանդ Դավթի Ասատրյան**
Առաջատար կազմակերպություն՝	Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2025թ. հոկտեմբերի 21-ին ժամը 12:00-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող հոգեբանության 064 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 19.09.2025 թ.:

Հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, հոգեբանական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Կամո Վարդանյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Հետազոտության արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հետպատերազմյան հասարակություններում հաճախ առաջանում են սոցիալական և հոգեբանական վերաձևավորումների գործընթացներ, որոնք ներառում են նույնականության վերագնահատում, ազգային ինքնության վերաիմաստավորում և սոցիալական դերերի փոփոխություն: Այս համատեքստում, զինծառայողների էթնիկական ինքնագիտակցության ձևավորումը, վերափոխումը կամ ճգնաժամային իրավիճակները կարող են ազդել ինչպես անհատական, այնպես էլ խմբային մակարդակում՝ սահմանելով նրանց վարքային նախապատվությունները, սոցիալական ինտեգրման մակարդակը և հասարակության նկատմամբ ունեցած վերաբերմունքը:

Էթնիկական ինքնագիտակցության փոփոխությունները կարող են նաև ազդել երկրի ներքին քաղաքական գործընթացների և անվտանգության համակարգի վրա: Զինծառայողների՝ հասարակության մեջ վերաինտեգրման արդյունավետությունը, նրանց քաղաքացիական ակտիվությունը կամ հակառակը՝ պասիվությունն ու օտարացումը, կարող են երկարաժամկետ ազդեցություն ունենալ պետական կառավարման, ազգային անվտանգության և սոցիալական համախմբվածության վրա:

Հայաստանյան կոնտեքստում՝ 44-օրյա պատերազմից հետո հասարակության մեջ ձևավորվել են տարբեր սոցիալական և քաղաքական հոսանքներ, որոնք անմիջականորեն առնչվում են պատերազմի մասնակիցների հոգեբանական վիճակին: Որոշ խմբեր ավելի ուժեղ են արտահայտում ազգայնական կամ հայրենասիրական զգացմունքներ, մինչդեռ մյուսները կարող են հակված լինել հիասթափության, պասիվության կամ սոցիալական մեկուսացման: Այս ուսումնասիրությունն անհրաժեշտ է՝ հասկանալու, թե ինչպես են այս գործընթացները ձևավորվում և ինչ ազդեցություն են ունենում զինծառայողների հոգեբանական բարեկեցության վրա:

Միջազգային հետազոտությունները ցույց են տալիս, որ հետպատերազմյան շրջաններում էթնիկական ինքնության փոփոխությունները կարող են պայմանավորված լինել հոգեբանական պաշտպանական մեխանիզմներով, սոցիալական կառույցներով, մշակութային կոդերով և քաղաքական գործընթացներով: Սակայն Հայաստանում նման հետազոտությունները դեռևս սահմանափակ են,

ինչը ստեղծում է անհրաժեշտություն՝ դրանք ավելի մանրամասնորեն ուսումնասիրելու համար։

Էթնիկական ինքնագիտակցությանը անդրադարձել են՝ Է. Էրիկսոն (էթնիկական ինքնության ձևավորման հոգեբանական մոդել), Թէջֆել և Թերներ (սոցիալական նույնականության տեսություն), Ջ. Բերի (էթնիկական ինքնության ադապտացիայի տեսություն), Վ. Ֆրանկլ (տրավմայի վերապրման էքզիստենցիալ մոտեցում), Ա. Վիսերման (պատերազմի ազդեցությունը սոցիալական հարաբերությունների վրա)։

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել պատերազմի մասնակից զինծառայողների էթնիկական ինքնագիտակցության սոցիալ-հոգեբանական դրսևորումները հետպատերազմյան շրջանում, ինչպես նաև դրա ազդեցությունը վարքային մոդելների, սոցիալական ինտեգրման ու արժեքային կողմնորոշումների վրա։

Նպատակից ելնելով սահմանվել են հետևյալ **խնդիրները՝**

- Վերլուծել անձի ինքնագիտակցության, էթնիկական ինքնագիտակցության հայեցակարգերն ու մոտեցումները հոգեբանության մեջ։
- Բացահայտել էթնիկական ինքնագիտակցության առանձնահատկությունները ճգնաժամային, պատերազմական և հետպատերազմյան պայմաններում։
- Ուսումնասիրել զինծառայողների էթնիկական ինքնագիտակցության սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները։
- Վերլուծել պատերազմի ազդեցությունը զինծառայողների սոցիալ-հոգեբանական վիճակի վրա հետպատերազմյան շրջանում։
- Հետազոտել զինծառայողների էթնիկական ինքնագիտակցության սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները հետպատերազմյան շրջանում։
- Իրականացնել ստացված արդյունքների համահարաբերակցային վերլուծություն։
- Մշակել առաջարկություններ՝ ուղղված զինծառայողների սոցիալական ինտեգրմանն ու հետպատերազմյան հոգեբանական վերականգնմանը։

Հետազոտության վարկածը: Ենթադրվում է, որ պատերազմի մասնակից զինծառայողների էթնիկական ինքնագիտակցությունը հետպատերազմյան շրջանում կարող է արտահայտվել փոփոխություններով՝ էթնիկական նույնականության մեջ, այդ թվում էթնիկական խմբին պատկանելության, սեփական դերի

վերագնահատումով, էթնիկական դիրքորոշումների փոփոխությամբ, հայրենասիրական զգացմունքների ուժեղացումով, թշնամու ընկալման փոփոխությունով, էթնիկական արժեքների և իդեալների վերաիմաստավորման մեջ:

Հետազոտության օբյեկտը՝ էթնիկական ինքնագիտակցությունն է:

Հետազոտության առարկան է՝ պատերազմի մասնակից զինծառայողների էթնիկական ինքնագիտակցության սոցիալ-հոգեբանական դրսևորումները:

Հետազոտության տեսամեթոդաբանական հիմք են հանդիսացել ինքնագիտակցության՝ Ա. Մասլոուի (Maslow A.H.,1970), Կ. Ռոջերսի (Rogers, C.R., 1959), Է. Էրիկսոնի (Erikson, E.H., 1963) անձի տեսությունները, որոնք բացատրում են անձի ինքնագիտակցության ձևավորումը սոցիալական և ճգնաժամային պայմաններում, էթնիկական նույնականության մասին Ջ. Բերիի (Berry J.W., 1992.) աշխատանքները, որոնք ուսումնասիրում են մշակութային հարմարումը, ինտեգրումը և էթնիկական հարաբերությունների փոփոխությունները, Հոֆստեդեի (Hofstede G.,1991) մշակութային չափանիշները էթնիկ խմբերի վարքային տարբերությունների վերաբերյալ, ճգնաժամային իրավիճակներում (պատերազմ, զինված հակամարտություն) հոգեկանի փոփոխությունների ուսումնասիրությունները հիմնված Բ. վան դեր Քոլքի (Van der Kolk, Bessel A., 1987) և Ջ. Հերմանի (Herman J.L., 1997) հետազոտությունների վրա, և հետտրավմատիկ աճի տեսությունը (Tedeschi & Calhoun, 1996), որը բացատրում է, թե ինչպես է անձը տրավմատիկ փորձառությունից հետո վերաիմաստավորում սեփական ինքնությունը:

Հետազոտության մեթոդները: Հետազոտության ընթացքում կիրառվել են տվյալների հավաքագրման, համահարաբերակցային վերլուծության և մեկնաբանման որակական և քանակական մեթոդներ՝

- ✓ թեստավորում
- ✓ հարցազրույց:

- Էթնիկական նույնականության տեսակների ախտորոշման մեթոդիկա (Սոլդատովա Գ.Ու., Ռիժովա Ս.Վ.),
- «Հանդուրժողականության գործակից» էքսպրես հարցարան (Գ. Ու. Սոլդատովա, Օ.Ա. Կրավցովա, Օ.Ե. Խուխլաև, Լ.Ա. Շայգերովա),
- Էթնոազգային դիրքորոշումների սանդղակ (Օ.Ե. Խուխլաև, Ի. Մ. Կուզնեցով, Ն.Վ. Տկաչենկո),
- «Վստահություն» մեթոդիկա (Լ.Գ. Պոչեբուտ, Մ.Ի. Կիլոշենկո, Ա .Լ. Սվենցիցկի, Տ.Վ. Կազանցեվա),
- Բազային արժեքային կողմնորոշումներ (Շ. Շվարց):

Հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ ուսումնասիրվել են 44-օրյա պատերազմի մասնակից զինծառայողների էթնիկական ինքնագիտակցության սոցիալ-հոգեբանական դրսևորումները հետպատերազմյան շրջանում՝ բացահայտելով դրանց ազդեցությունը վարքային մոդելների, սոցիալական ինտեգրման և արժեքային կողմնորոշումների վրա: Հետազոտությունը նորովի է դիտարկում զինծառայողների էթնիկական ինքնագիտակցության փոփոխությունների սոցիալ-հոգեբանական գործոնները, ինչպիսիք են էթնիկական նույնականության զգացումը, սոցիալական համատեքստում սեփական դերի վերագնահատումը, հայրենասիրական զգացմունքների ուժեղացումը և թշնամու ընկալման փոփոխությունը: Նորույթ է նաև էթնիկական արժեքների և իդեալների վերաիմաստավորման գործընթացի ուսումնասիրությունը, ինչպես նաև էթնիկական խմբերի միջև հարաբերությունների փոփոխությունների վերլուծությունը հետճգնաժամային հասարակության մեջ: Հետազոտության արդյունքների հիման վրա մշակվել են գործնական առաջարկություններ, որոնք ուղղված են զինծառայողների սոցիալական վարքի և ինտեգրման բարելավմանը, ինչպես նաև հետպատերազմյան շրջանում նրանց էթնիկական ինքնագիտակցության ամրապնդմանը:

Տեսական նշանակությունը: Էթնիկական ինքնագիտակցության սոցիալ-հոգեբանական դրսևորումների հետազոտության տեսական նշանակությունը բազմաշերտ է և ընդգրկում է մի շարք կարևոր ասպեկտներ: Նման ուսումնասիրությունները նպաստում են էթնիկական ինքնության ձևավորման, զարգացման և դրսևորման մեխանիզմների խորքային ըմբռնմանը՝ հաշվի առնելով սոցիալական, մշակութային և հոգեբանական գործոնների փոխազդեցությունը:

Կիրառական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կարող են նպաստել զինծառայողների համար հատուկ հոգեբանական աջակցության ծրագրերի մշակմանը, որոնք կօգնեն հաղթահարել հետպատերազմյան տրավմաները, վերականգնել հոգեբանական բարեկեցությունը: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել կրթական հաստատություններում՝ մշակելու համար ծրագրեր, որոնք կզարգացնեն էթնիկական ինքնագիտակցությունը և կխթանեն բազմամշակութային հանդուրժողականությունը: Հետազոտության տվյալները կարող են օգտակար լինել պետական մարմինների համար՝ մշակելու քաղաքականություններ, որոնք ուղղված են զինծառայողների սոցիալ-հոգեբանական խնդիրների լուծմանը և ազգային միասնության ամրապնդմանը:

Պաշտպանության ներկայացվող դրույթներն են՝

- Պատերազմի մասնակից զինծառայողների մոտ էթնիկական ինքնագիտակցությունը հետպատերազմյան շրջանում կարող է դրսևորվել ազգային ինքնության և պատկանելության զգացման ուժեղացմամբ, ինչը նպաստում է ազգային համախմբվածության և հայրենասիրական արժեքների ամրապնդմանը:
- Պատերազմի մասնակից զինծառայողների էթնիկական ինքնագիտակցության փոփոխությունները կարող են ազդել նրանց սոցիալական վարքի վրա՝ առաջացնելով դժվարություններ հասարակության մեջ վերաինտեգրվելու, սոցիալական կապերի վերականգնման և քաղաքացիական կյանքին հարմարման գործընթացներում:
- Պատերազմի փորձառությունը կարող է հանգեցնել զինծառայողների արժեքային կողմնորոշումների վերանայման, ինչն արտահայտվում է էթնիկական արժեքների և իդեալների վերաիմաստավորմամբ, ինչպես նաև էթնիկական խմբերի միջև հարաբերությունների նորովի ընկալմամբ:
- Զինծառայողների էթնիկական ինքնագիտակցության փոփոխությունները կարող են արտահայտվել հակամարտող կողմի նկատմամբ վերաբերմունքի փոփոխությամբ, ինչը կարևոր է հետկոնֆլիկտային հասարակության մեջ հաշտեցման և խաղաղ համակեցության գործընթացների համար:
- Զինծառայողների էթնիկական ինքնագիտակցության սոցիալ-հոգեբանական դրսևորումները հետպատերազմյան շրջանում ենթակա են փոփոխությունների, որոնք պայմանավորված են ինչպես անհատական, այնպես էլ հասարակական գործոններով, ինչպիսիք են սոցիալական աջակցությունը, հասարակության վերաբերմունքը, պատերազմի ավարտի արդյունքները և հետպատերազմյան սոցիալական պայմանները:

Հետազոտության արդյունքների հուսալիությունն ու հավաստիությունը հիմնավորված են հիմնախնդրին առնչվող աղբյուրների ընտրությամբ և վերլուծությամբ, հետազոտության տեսամեթոդական հիմքի ներկայացմամբ, աշխատանքի նպատակին համապատասխան խնդիրների մշակմամբ, հավաստի փորձարարական մեթոդական գործիքակազմի ընտրությամբ, ստացված արդյունքների բազմակողմանի վերլուծությամբ և մեկնաբանմամբ:

Աշխատանքի փորձարկումն ու հրապարակային քննարկումը: Կատարվել է գիտական աշխատանքների ծավալուն վերլուծություն

(ընդհանուր 131 աղբյուր), ատենախոսության արդյունքներն արտացոլվել են 7 գիտական հրապարակումներում՝ գիտական ամսագրերում և միջազգային գիտաժողովում: Աշխատանքի առանձին դրույթներ ներկայացվել են Խ. Աբովյանի անվան ՀՄՊՀ ակադեմիկոս Մ. Մազմանյանի անվան հոգեբանության ամբիոնի նիստերում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, գիտական վերլուծության երկու տեսական գլուխներից և ուսումնասիրության մեթոդաբանության մեկ գլխից, եզրակացություններից, գործնական առաջարկներից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից: Ատենախոսությունը ներառում է 18 աղյուսակ, և բաղկացած է 159 էջից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունը ներառում է թեմայի արդիականությունը, հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը, հետազոտության նպատակը, վարկածը, նպատակից բխող խնդիրները, օբյեկտը, առարկան, հետազոտության ընտրակազմը, մեթոդիկաները, տեսական և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, աշխատանքի տեսական և կիրառական նշանակությունը, հետազոտության փորձաքննությունը, հավաստիությունն ու հիմնավորվածությունը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Աշխատանքի առաջին՝ «**Անձի ինքնագիտակցության հիմնախնդիրը հոգեբանության մեջ»** գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Ատենախոսության առաջին՝ **«Անձի ինքնագիտակցության բնորոշումը, հայեցակարգերը»** ենթագլխում ներկայացված են գիտական գրականության մեջ առկա անձի ինքնագիտակցության բազմաբնույթ սահմանումները և հայեցակարգերը: Ժամանակային տեսանկյունից ինքնագիտակցությունը բարդ կազմավորում է. այն չի ընդգծում անձը ստատիկ վիճակում, այլ արտացոլում է նրա անընդհատ զարգացման գործընթացը: Մոտեցումների բազմազանությունը պայմանավորված է ինքնագիտակցության երևույթի բարդությամբ և հակասականությամբ: Ինքնագիտակցությունը որպես մարդկային հոգեկանի հատուկ դրսևորում, կարելի է առանձնացնել՝ անձի կողմից ինքնաճանաչման հիմքի վրա վարքի ոլորտում սեփական գործողությունների, գործունեության և սեփական անձի նկատմամբ հուզական-արժեքային վերաբերմունքի ինքնակարգավորումը:

Ատենախոսության երկրորդ՝ «**Էթնիկական ինքնագիտակցության հիմնախնդիրը հոգեբանության մեջ»** ենթագլխում ներկայացված են էթնիկական ինքնագիտակցության սահմանումները, մոտեցումները և

հիմնական հայեցակարգերը։ Էթնիկական ինքնագիտակցությունը էթնիկական հանրույթի գոյության ու գործառնության կարևոր գործոն է, որը ոչ միայն նրանց կազմակերպման անհրաժեշտ պայման է, այլև էթնիկական հանրությունների անբաժանելի հատկանիշ է։ Էթնիկական ինքնագիտակցության շնորհիվ հանրությունները վերածվում են միասնական օրգանիզմի, որը թույլ է տալիս նրանց դառնալ սոցիալական, քաղաքական և մշակութային գործընթացների ակտիվ մասնակից։ Այն հանդես է գալիս որպես էթնիկական կեցության ռեֆլեքսիա, որպես հանրության սոցիալ-մշակութային գործունեության արդյունք։ Էթնիկական ինքնագիտակցության մեջ կենտրոնացված են էթնոսի նախորդ սերունդների հիմնական հետաքրքրությունները և պահանջմունքները, գաղափարախոսությունը և կարծրատիպերը։

Ատենախոսության երրորդ՝ **«Էթնիկական ինքնագիտակցության հիմնախնդիրը ճգնաժամային, հարափոփոխ պայմաններում»** ենթագլխում վերլուծվում են էթնիկական ինքնագիտակցության փոփոխությունները ճգնաժամային իրավիճակներում, որոնք առաջանում են պատերազմի, համաճարակի, սոցիալ-տնտեսական և գլոբալիզացիայի գործընթացների ազդեցությամբ։ Քննարկվում է, թե ինչպես են այդ պայմանները վերափոխում անձի և խմբի ինքնընկալումը, ներառյալ ավանդույթների, լեզվի և մշակութային արժեքների վերաիմաստավորումը։ Ընդգծվում է, որ ճգնաժամային իրավիճակներում էթնիկական ինքնագիտակցությունը կարող է դրսևորվել երեք ձևով՝ ակտիվ փոփոխություն, պասիվ խուսափում, իրավիճակի հետ կառուցողական երկխոսություն։ Այս գործընթացները պայմանավորում են էթնիկական խմբի հարմարվողականությունը՝ հանգեցնելով անորոշության և սթրեսի։

Երկրորդ՝ «**Զինծառայողների էթնիկական ինքնագիտակցության առանձնահատկությունները»** գլուխը բաղկացած է երեք ենթագլխից։

Ատենախոսության երկրորդ գլխի առաջին՝ **«Զինծառայողների սոցիալ-հոգեբանական բնութագիրը»** ենթագլխում ներկայացվում է զինծառայողի՝ որպես ռազմական կոլեկտիվի անդամի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները։ Զինծառայողի անձնային զարգացումը, ներառյալ հուզական բարեկեցությունը, բարոյական արժեքները և ինքնակառավարումը, կարևոր դեր է խաղում նրա ծառայողական պարտականությունների կատարման մեջ։ Հատուկ ուշադրություն է դարձվում մարտական գործունեության սթրեսային բնույթին, կարգապահությանը և ռազմական մասնագիտական պատրաստվածությանը։ Զինվորական կոլեկտիվի սոցիալ-հոգեբանական

երևույթները, ինչպիսիք են խմբային կարծիքը, կոնֆլիկտները և համերաշխությունը, պայմանավորում են զինծառայողի վարքն ու արդյունավետությունը:

Ատենախոսության երկրորդ գլխի Եշերկրորդ՝ «**Հետպատերազմյան շրջանում զինծառայողների սոցիալ-հոգեբանական դրսևորումները (պատերազմի ազդեցությունները զինծառայողի վրա)»** ենթագլխում ներկայացվում է պատերազմի ազդեցությունը զինծառայողների հոգեկանի վրա՝ ընդգծելով խաղաղ պայմաններին հարմարվելու դժվարությունները: Պատերազմը փոխում է զինծառայողի աշխարհայացքը, արժեքները և վարքը՝ հանգեցնելով սոցիալական մեկուսացման, հուզական անկայունության և հետտրավմատիկ սթրեսային խանգարումների (ՀՏՍԽ): Հետպատերազմյան շրջանում անհրաժեշտ է հոգեբանական և սոցիալական աջակցություն՝ վերականգնման, աշխատանքի և հասարակության հետ կապերի վերականգնման համար: Խնդիրները ներառում են՝ ՀՏՍԽ, սոցիալական մեկուսացման, հուզական դժվարությունների ու մասնագիտական վերաինտեգրման հարցերը:

Երրորդ՝ «**Հետպատերազմյան շրջանում զինծառայողների էթնիկական ինքնագիտակցության առանձնահատկությունները»** ենթագլխում ներկայացվում է պատերազմի ազդեցությունը զինծառայողների էթնիկական նույնականության վրա: Պատերազմը խաթարում է անհատի կյանքը՝ փոխելով արժեքները, աշխարհայացքը և սեփական էթնոսին պատկանելության զգացումը: Հաղթանակի դեպքում զինծառայողները զգում են ազգային հպարտություն և էթնիկական նույնականության ամրապնդում, ինչը նպաստում է մարդկանց էթնոսոցիալական ինտեգրմանը: Պարտությունը կամ տրավմատիկ փորձը կարող են հանգեցնել հիասթափության, կասկածների և նույնականության կորստի: Հետտրավմատիկ սթրեսային խանգարումները խաթարում են էթնիկական ինքնագիտակցությունը, առաջացնում հուզական ապակողմնորոշում: Որոշ զինծառայողներ զգում են հետտրավմատիկ անձնային աճ՝ վերագնահատում արժեքները, խորացնում կապը էթնոսի հետ, զարգացնում վճռականություն:

Ատենախոսության երրորդ՝ «**Հետպատերազմյան շրջանում զինծառայողների էթնիկական ինքնագիտակցության սոցիալ-հոգեբանական դրսևորումների փորձարարական հետազոտություն»** գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Ատենախոսության այս գլխի **«Հետազոտության կազմակերպումը, մեթոդիկաների և ընտրանքի նկարագրությունը»** ենթագլխում

ներկայացված են հետազոտության կազմակերպումը, մեթոդաբանական հիմքերը, ընտրանքը, մեթոդներն ու մեթոդիկաները: Հետազոտությունն անցկացվել է 2022-2024 թթ.: Կիրառվել են թեստավորում, հարցազրույց և առցանց հարցում: Ընտրանքը ներառել է 420 զինծառայող (18-65 տարեկան, հայ, եզդի, ասորի), բաժանված փորձարարական (210 մարտական գործողությունների մասնակից) և ստուգիչ (210 չմասնակցած) խմբերի: Հետազոտության համար կիրառվել են հետևյալ մեթոդիկաները՝ էթնիկական նույնականության տեսակների ախտորոշման մեթոդիկա (Սոլդատովա Գ.Ու., Ռիժովա Ս.Վ.), «Հանդուրժողականության գործակից» էքսպրես հարցարան (Գ.Ու. Սոլդատովա, Օ.Ա. Կրավցովա, Օ.Ե. Խուխլան, Լ.Ա. Շայգերովա), էթնոազգային դիրքորոշումների սանդղակ (Օ.Ե. Խուխլաեվ, Ի.Մ. Կուզնեցով, Ն.Վ. Տկաչենկո), «Վստահություն» մեթոդիկա (Լ.Գ. Պոչեբուտ, Մ.Ի. Կիլոշենկո, Ա.Լ. Սվենցիցկի, Տ.Վ. Կազանցեվա), Բազային արժեքային կողմնորոշումներ (Շ. Շվարց): Իրականացվել են հոգեախտորոշիչ հետազոտություններ, որից հետո տվյալների նկարագրական և վիճակագրական վերլուծություն, համահարաբերակցային վերլուծություններ, ինչի հիման վրա տրվել են եզրակացություններ և առաջարկություններ:

Հետազոտության երկրորդ՝ **«Զինծառայողների էթնիկական ինքնագիտակացության սոցիալ-հոգեբանական դրսևորումների ուսումնասիրություն»** ենթագլխում ներկայացվել և վերլուծվել են կիրառված մեթոդիկաների տվյալները:

Էթնիկական նույնականության տեսակների ախտորոշման մեթոդիկայի (Սոլդատովա Գ.Ու., Ռիժովա Ս.Վ.) կիրառության արդյունքում ստացել ենք հետևյալ պատկերը (տես՝ աղյուսակ 1):

Էթնիկական նույնականության տեսակ	փորձարարական խումբ				ստուգիչ խումբ			
	Ընդհ.	Ասորի	Եզդի	Հայ	Ընդհ.	Ասորի	Եզդի	Հայ
Էթնոնիհիլիզմ	4,1	2,3	3,7	4,2	5,1	3	2,5	5,4
Էթնիկական անտարբերություն	7,3	9,6	8,8	7,3	7,2	7,5	7,5	7,3
Նորմա	15,8	20	17,3	15,5	14,5	18,5	16,3	14,4
Էթնոէգոիզմ	6,8	6,7	5	7	6,3	7,7	6,7	6,1
Էթնոմեկուսացում	7,9	7,3	7,5	7,9	7,3	9	8	6,9
Էթնոֆանատիզմ	11,5	8	9,8	11,8	8,7	7,8	11,4	8,5

Աղյուսակ 1. Փորձարարական (ՓԽ) և վերստուգիչ խմբերում (ՎԽ) էթնիկական նույնականության տեսակների ախտորոշման միջին արդյունքներն ըստ ազգային պատկանելության խմբերում

Փորձարարական խմբում (ՓԽ) մարտական փորձը նպաստել է էթնիկական ինքնության նորմալացմանը՝ նվազեցնելով էթնոնիհիլիզմի և էթնոմեկուսացման մակարդակը, ուժեղացրել է էթնոֆանատիզմն ու էթնոէգոիզմը որոշ խմբերում, ինչը բացատրում ենք պաշտպանական և ինքնաճանաչողական մեխանիզմների ակտիվացմամբ։

Ստուգիչ խմբում (ՎԽ) մարտական փորձի բացակայությունը հանգեցրել է ավելի բարձր ցուցանիշների էթնոնիհիլիզմի և էթնոմեկուսացման սանդղակներով, ինչը կարող է ցույց տալ էթնիկական ինքնության որոշակի անորոշություն և զգացմունքային անկայունություն։

Այսպիսով, մարտական փորձը զգալիորեն փոխում է էթնիկական ինքնության ընկալումը՝ ուժեղացնելով համախմբվածությունն ու ինքնաճանաչումը սեփական խմբի շրջանակներում։ Սեռային տարբերությունները կարևոր դեր են խաղում էթնիկական նույնականության ձևավորման գործընթացում՝ արտահայտելով սոցիալական և մշակութային դերերի ազդեցությունը։

«Հանդուրժողականության գործակից» էքսպրես հարցարանի (Գ.Ու. Սոլդատովա, Օ.Ա. Կրավցովա, Օ.Ե. Խուխլաև, Լ.Ա. Շայգերովա) կիրառության արդյունքում ստացել ենք հետևյալ պատկերը։

Ստուգիչ խմբում բոլոր խմբերի միջին ցուցանիշները ավելի բարձր են, ինչը խոսում է պատերազմի բացակայության պայմաններում հանգիստ էթնոսոցիալական փոխհարաբերությունների մասին։

Փորձարարական խմբում նկատվում է հանդուրժողականության մակարդակի նվազում, հատկապես հայերի և ասորիների մոտ, ինչը կարող է պայմանավորված լինել պատերազմական սթրեսի հետևանքով առաջացած պաշտպանական և խտրական դիրքորոշումների հետ։

Էթնոազգային դիրքորոշումների սանդղակ (Օ.Ե. Խուխլաև, Ի.Մ. Կուզնեցով, Ն.Վ. Տկաչենկո) մեթոդիկայի կիրառության արդյունքում ստացել ենք հետևյալ պատկերը։ Ախտորոշման արդյունքներն ըստ փորձարարական (ՓԽ) և ստուգիչ խմբերի (ՍԽ) ազգայնական, հայրենասիրական չեզոք և նեգատիվ էթնոազգային դիրքորոշումների ենթասանդղակներով։ Ազգայնական դիրքորոշումները առավել արտահայտված են ՓԽ-ում, հատկապես ասորիների մոտ, ինչը պայմանավորված է մարտական գործողությունների լարվածությամբ։ Հայրենասիրական դիրքորոշումները ուժեղ են բոլոր խմբերի մոտ, և դիտվում է որպես հիմնական դոմինանտ, ինչը վկայում է մշակութային ինքնության և ազգային արժեքների կարևորության մասին։ Չեզոք դիրքորոշումները նվազում են ՍԽ-ում, ինչը վկայում է խաղաղ պայմաններում ավելի հստակ և կայուն դիրքորոշումների ձևավորման

մասին: Նեգատիվ դիրքորոշումները կայուն են մնացած խմբերի մոտ, ինչը խոսում է ակտիվ և հստակ դիրքորոշումների գերակայության մասին էթնոազգային հարցերում, սակայն նվազում են մարտական գործողություններին չմասնակցած ընտրանքում:

«Վստահություն» մեթոդիկան (Լ.Գ. Պոչեբուտ, Մ.Ի. Կիլոշենկո, Ա.Լ. Սվենցիցկի, Տ.Վ. Կազանցևա) ուղղված է անձի՝ այլ մարդկանց նկատմամբ վստահության (անձնային վստահություն) և շրջապատի մարդկանց միմյանց հանդեպ վստահության (սոցիալական վստահություն) ախտորոշմանը: ՓԽ-ի մասնակիցների վստահության մակարդակը զգալիորեն ցածր է, ինչը վկայում է պատերազմի մասնակիցների մոտ ադրբեջանցիների նկատմամբ բացասական վերաբերմունքի և լարվածության մասին: ՍԽ-ի մասնակիցների շրջանում դիտվում է վստահության ավելի բարձր մակարդակ, ինչը խոսում է պատերազմի բացակայության դեպքում միջէթնիկական ավելի ներդաշնակ հարաբերությունների մասին (տես՝ աղյուսակ 2):

Արժեք	փորձարարական խումբ				ստուգիչ խումբ			
	Ընդհ.	Ասորի	Եզդի	Հայ	Ընդհ.	Ասորի	Եզդի	Հայ
Կոնֆորմություն	4,5	4,4	4,4	4,5	5,3	4,9	5,2	5,4
Ինքնուրույնություն	5,1	5	5,1	5,1	4,6	4,2	4,8	4,6
Ձեռքբերումներ	4,2	4	4,1	4,1	3,7	3,4	3,9	3,6
Ավանդականություն	3,8	3,8	3,8	3,8	4,2	4,3	4,1	4,2
Ունիվերսալիզմ	4,9	4,9	4,9	4,9	5,1	4,7	5,2	5,1
Ստիմուլյացիա	4,6	4,3	4,5	4,7	4,2	3,7	4,3	4,2
Անվտանգություն	4,7	5,2	4,7	4,6	5,3	5,2	5,1	5,3
Կամեցողություն	4,9	4,9	4,9	4,9	4,6	4,4	4,8	4,6
Իշխանություն	3,5	4,1	3,5	3,3	3	3,5	3,1	3,1
Հեդոնիզմ	3,8	4	3,9	3,8	3,3	3,1	3,5	3,4

Աղյուսակ 2. Պատերազմի մասնակից և չմասնակցած խմբերի բազային արժեքային կողմնորոշումների վերլուծություն՝ հայերի, ասորիների և եզդիների միջև

ՓԽ-ում բարձր են ինքնուրույնության, ստիմուլյացիայի և իշխանության արժեքները, ինչը պայմանավորված է պատերազմական իրավիճակի պայմաններում բազային անձնային արժեքների վերանայումով: ՍԽ-ում բարձր են կոնֆորմության, ավանդականության և անվտանգության արժեքները, ինչը խոսում է նրանց մոտ սոցիալական նորմերին և ավանդույթներին հետևելու մասին:

Ասորիների մոտ ՓԽ-ում բարձր է իշխանության արժեքը, իսկ ՍԽ-ում՝ ավանդականությունը: Եզդիների մոտ ՓԽ-ում նկատվում է ունիվերսալիզմի բարձր մակարդակ, հայերի մոտ՝ ստիմուլյացիայի բարձր արժեք, իսկ ՍԽ-ում՝ կոնֆորմություն:

Մարտական գործողությունների փորձ ունեցողների արժեքներն առավելապես ուղղված են անձնային աճի և նոր փորձառությունների կարևորմանը: Մարտական գործողություններին չմասնակցած անձնանց մոտ արժեքներն ավելի սոցիալական են, կենտրոնացած են ավանդույթների և անվտանգության վրա: Ազգային խմբերի միջև տարբերությունները պայմանավորված են ինչպես սոցիալական դերով, այնպես էլ էթնոմշակութային առանձնահատկություններով:

Այսպիսով, էթնիկական նույնականության ձևավորման և միջանձնային հարաբերությունների վրա էական ազդեցություն ունեն պատերազմի փորձառությունն ու սոցիալ-մշակութային գործոնները:

Պատերազմական փորձը խթանում է էթնիկական ինքնության համախմբումը, միևնույն ժամանակ ակտիվացնում է պաշտպանողական մեխանիզմները, արժեքները անձնային աճի և իշխանության վրա: Պատերազմական փորձ չունեցողների մոտ միջանձնային հարաբերությունները կայուն են, գերիշխում են սոցիալական արժեքները:

Ատենախոսության երրորդ գլխի երրորդ՝ **«Զինծառայողների էթնիկական ինքնագիտակցության սոցիալ-հոգեբանական դրսևորումների ստացված արդյունքների համահարաբերակցային կապերի վերլուծությունը»** ենթագլխում ներկայացված է հետազոտության ընթացքում կիրառված մեթոդիկաների արդյունքում ստացված տվյալների համահարաբերակցային վերլուծություն:

Էթնիկական նույնականության սանդղակներ	Հանդուրժ. ինտեգրալ գործակից	Էթնիկ. հանդ.	Սոց. հանդ.	Հանդ. անհատ. հատկ.
Էթնոնիհիլիզմ	0,09	0,15*	0,08	-0,07
Էթնիկական անտարբերություն	0,05	0,42***	0,01	0,19**
Նորմա	-0,06	0,34***	-0,14*	0,08
Էթնոէգոիզմ	-0,05	-0,62***	-0,40***	-0,34***
Էթնոմեկուսացում	-0,16*	-0,65***	-0,23***	-0,26***
Էթնոֆանատիզմ	0,06	-0,43***	-0,08	-0,19**

*- P<0,05; **- P<0,01, ***- P<0,001

Աղյուսակ 3. Էթնիկական նույնականության տեսակների ախտորոշման մեթոդիկայի և «Հանդուրժողականության գործակից» էքսպրես հարցարանի սանդղակներով ստացված տվյալների միջև համահարաբերակցությունը պատերազմի մասնակցածների մոտ (ՓԽ)

Մարտական գործողությունների փորձ ունեցողների մոտ էթնիկական նույնականության տեսակների և հանդուրժողականության ինտեգրալ և նրա տեսակների համարաբերակցային վերլուծությունը ցույց տվեց, որ էթնոնիհիլիզմն ու անտարբերությունը որոշ դեպքերում նպաստում են հանդուրժողականության դրսևորումներին: Էթնոմեկուսացումը էթնոէգոիզմը և էթնոֆանատիզմը բացասաբար են ազդում հանդուրժողականության վրա՝ մեծացնելով սոցիալական կոնֆլիկտների և խտրականության ռիսկը: Էթնոէգոիզմն առավել ընդգծված է խմբի պաշտպանության և համախմբման տեսանկյունից: Նրանց արժեքային համակարգը կառուցված է խմբային գերակայության հաստատման վրա՝ նվազ կարևորվելով անհատական ինքնարտահայտումը: Մարտական փորձ ունեցողների համար անվտանգությունն առաջնահերթ է՝ որպես կյանքի վտանգների հաղթահարման բաղադրիչ: Մինչդեռ պատերազմական փորձ չունեցողները կենտրոնանում են ավանդույթների պահպանման վրա՝ առանց անվտանգության կարևոր գործոնի:

Արժեքային կողմնորոշումներ	ԷՆ	ԷԱ	Նորմա	ԷԷ	ԷՄ	ԷՖ
Կոնֆորմություն	0,31****	0,13*	0,17**	0,36****	0,35****	0,31****
Ինքնուրույնություն	-0,12*	0,27***	0,26***	0,22***	0,31****	0,08
Ձեռքբերումներ	0,17**	0,29****	0,22***	0,41****	0,18**	0,11
Ավանդականություն	-0,15**	0,01	0,17**	0,31****	0,25****	0,15**
Ունիվերսալիզմ	0,15**	0,01	0,17**	-0,31****	-0,25****	-0,15**
Ստիմուլյացիա	0,08	0,33****	0,44****	0,09	0,06	-0,06
Անվտանգություն	0,28****	0,14**	0,22**	0,38****	0,39****	0,29****
Կամեցողություն	-0,19***	-0,12*	0,36****	0,07	0,17**	0,07
Իշխանություն	0,25****	0,27****	0,19***	0,26****	0,12*	0,16**
Հեդոնիզմ	0,17**	0,51****	0,42****	0,27****	0,15**	0,10

*- P<0,10; **- P<0,05; ***- P<0,01, ****- P<0,001

Աղյուսակ 4. Էթնիկական նույնականության տեսակների ախտորոշման մեթոդիկայի և բազային արժեքային կողմնորոշումներ (Շ. Շվարց) հարցարանի սանդղակներով ստացված տվյալների միջև համահարաբերակցությունը մարտական գործողությունների մասնակցած զինծառայողների մոտ (ՓԽ)

Աղյուսակ 4-ի արդյունքներից պարզ է դառնում, որ անվտանգությունը համընդհանուր արժեք է բոլոր էթնիկական նույնականությունների մոտ, սակայն դրա կարևորությունը հատկապես բարձր է էթնոմեկուսացման և էթնոֆանատիզմի դեպքում: Էթնոէգոիզմն ու էթնոմեկուսացումը հակասում են համընդհանուր արժեքներին, ինչը

խոչընդոտում է բազմամշակութային համերաշխության հաստատմանը: Կոնֆորմիզմը նշանակալի դեր ունի բոլոր էթնիկ նույնականությունների դեպքում, սակայն դրա դրսևորումները տարբերվում են՝ կախված արժեքների ընդհանուր համակարգից: Էթնոֆանատիզմն ու էթնոմեկուսացումը հակված են խանգարելու սոցիալական փոխըմբռնմանը, չնայած որ դրանք կարող են ներառել բարձր ինքնուրույնության և անվտանգության բաղադրիչներ:

Արժեքային կողմնորոշումներ	Ազգայնական դիրքորոշում	Հայրենասիրական դիրքորոշումներ	Չեզոք էթնիկ դիրքորոշում	Նեգատիվ էթնիկ դիրքորոշում.
Կոնֆորմություն	0,08	0,15**	0,09	0,05
Ինքնուրույնություն	0,13*	0,38****	-0,21***	-0,27****
Հեդոնիզմ	-0,08	-0,01	0,10	0,10
Ավանդականություն	0,13*	0,19***	-0,05	0,03
Ունիվերսալիզմ	0,09	0,17**	0,01	0,04
Ստիմուլյացիա	0,10	0,12*	-0,10	-0,23****
Անվտանգություն	0,13*	0,26****	0,08	-0,05
Կամեցողություն	0,12*	0,35****	-0,07	-0,05
Իշխանություն	0,10	-0,04	0,16**	0,07
Հեդոնիզմ	0,11*	0,03	0,13*	0,07

*- P<0,10; **- P<0,05; ***- P<0,01, ****- P<0,001

Աղյուսակ 5. Էթնոազգային դիրքորոշումների սանդղակ մեթոդիկայի և բազային արժեքային կողմնորոշումներ (Շ. Շվարց) հարցարանի սանդղակներով ստացված տվյալների միջև համահարաբերակցությունը մարտական գործողությունների փորձ ունեցող զինծառայողների մոտ (ՓԽ)

Մարտական գործողությունների փորձ ունեցող զինծառայողների էթնոազգային դիրքորոշումների և արժեքային կողմնորոշումների միջև համահարաբերակցային արդյունքները վկայում են, որ անվտանգությունը կարևոր արժեք է ազգայնական, հայրենասիրական և չեզոք դիրքորոշումների համար, և դրա դերակատարությունը նվազ է նեգատիվ դիրքորոշումների դեպքում: Հայրենասիրական դիրքորոշում ունեցող անձանց ինքնուրույնությունը կարևոր արժեք է, մինչդեռ նեգատիվ դիրքորոշումների դեպքում այն նվազում է: Կամեցողությունը որպես դրական գիծ հայրենասիրական դիրքորոշումների դեպքում կարևոր է:

Մարտական փորձ ունեցող զինծառայողների մոտ ավելի խիստ են արտահայտվում բացասական դիրքորոշումները (էթնոէգոիզմ, էթնոմեկուսացում, էթնոֆանատիզմ), սակայն նրանց սոցիալական հարմարվողականությունը և համախմբվածության պահանջն առավել ուժեղ են: Պատերազմի փորձ չունեցող զինծառայողների մոտ

բացասական դիրքորոշումները մեղմ են, սակայն անհատական մակարդակում դրանք կարող են ավելի բացասաբար անդրադառնալ փոխհարաբերությունների վրա: Այս տարբերությունները ցույց են տալիս մարտական փորձի ազդեցությունը սոցիալական և էթնիկական հարաբերությունների սոցիալ-հոգեբանական կառուցվածքի վրա:

Եզրակացություններ

1. Անձի ինքնագիտակցության հայեցակարգերի և մոտեցումների վերլուծությունը ցույց տվեց, որ անձի ինքնագիտակցությունը բարդ, բազմաշերտ կառույց է, որը ձևավորվում է սոցիալական, մշակութային և անհատական գործոնների փոխազդեցության արդյունքում:

2. Էթնիկական ինքնագիտակցությունը դիտարկվում է որպես անհատի նույնականության կարևոր բաղադրիչ, որը ներառում է էթնիկական խմբին պատկանելության զգացում, մշակութային արժեքներ և սոցիալական վարքի մոդելներ:

3. Պատերազմական և հետպատերազմյան իրավիճակներում էթնիկական ինքնագիտակցությունը ենթարկվում է փոփոխությունների, որոնք կարող են արտահայտվել ազգային պատկանելության զգացման ուժեղացմամբ կամ, ընդհակառակը, ինքնության ճգնաժամով:

4. Զինծառայողներն առանձնանում են հատուկ սոցիալ-հոգեբանական բնութագրերով, որոնք ձևավորվում են զինվորական ծառայության և պատերազմի փորձառությունների ազդեցության ներքո: Նրանց մոտ զարգանում է հատուկ արժեքային համակարգեր, վարքային մոդելներ և սոցիալական հարաբերությունների ձևեր՝ որպես հետպատերազմյան կյանքի հարմարման պայման:

5. Պատերազմական փորձը, այդ թվում տրավմաները, կորուստները և սոցիալական միջավայրի փոփոխությունները, էական ազդեցություն են ունենում զինծառայողների հոգեբանական վիճակի վրա:

6. Հետպատերազմյան շրջանում զինծառայողների էթնիկական ինքնագիտակցությունը ենթարկվում է փոփոխությունների՝ պայմանավորված պատերազմի ընթացքում ստացած փորձառություններով, պատերազմի ավարտի արդյունքով, սոցիալական միջավայրի վերաբերմունքով և փոփոխություններով ու անձնային վերաիմաստավորումներով:

7. Պատերազմի փորձառությունը հանգեցնում է զինծառայողների արժեքային կողմնորոշումների վերանայման: Զինծառայողների էթնիկական ինքնագիտակցության փոփոխություններն արտահայտվում են նաև հակամարտող կողմի նկատմամբ վերաբերմունքի փոփոխությամբ, որոշ դեպքերում նկատվում է թշնամու նկատմամբ

բացասական վերաբերմունքի ուժեղացում, ինչը խոչընդոտում է հետճգնաժամային հաշտեցման գործընթացներին:

8. Մարտական գործողությունների փորձ ունեցող զինծառայողների մոտ էթնիկական ինքնագիտակցության բացասական դրսևորումները՝ էթնոէգոիզմը, էթնոմեկուսացումը և էթնոֆանատիզմը, զգալիորեն սահմանափակում են հանդուրժողականությունը՝ խորացնելով խմբային տարանջատումը և կոնֆլիկտայնությունը: Էթնոնիհիլիզմը և էթնիկական անտարբերությունը կարող են նպաստել էթնիկական հանդուրժողականությանը՝ պայմանավորված ռազմական փորձով ձևավորված հարմարվողականությամբ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հղինակի կողմից հրատարակված հետևյալ հրապարակումներում՝

1. Հովակիմյան Գ.Գ. Էթնիկական ինքնագիտակցության հիմնախնդիրը հասարակության ճգնաժամային, հարափոփոխ պայմաններում, Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, հումանիտար և հասարական գիտություններ N 1, 2023, էջ 457-466:

2. Հովակիմյան Գ.Գ. Հետպատերազմյան շրջանում զինծառայողների էթնիկական ինքնագիտակցության առանձնահատկությունները, Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, հումանիտար և հասարական գիտություններ N 2, 2023, էջ 220-233:

3. Հովակիմյան Գ.Գ. Զինծառայողների էթնիկական դիրքորոշումների առանձնահատկությունները հետպատերազմյան շրջանում, Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, հումանիտար և հասարական գիտություններ N 2, 2024, էջ 203-209:

4. Հովակիմյան Գ.Գ., Ստեփանյան Լ.Կ, Սարգսյան Լ.Կ. Պատերազմի մասնակից զինծառայողների էթնիկական նույնականության տեսակի և սթրեսակայունության կապը, Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի, մանկավարժություն և հասարակական գիտություններ 2(69), 2024, էջ 156-169: DOI: 10.51307/182931072015233260-24.69-156

5. Sargsyan L., Avagimyan H., Hovakimyan G., Stepanyan L. The impact of stress resilience of war participants on the attitude towards death., Katchar scientific periodical, 2, 2024, P. 184-197: DOI: 10.54503/2579-2903-2024.2-184

6. Հովակիմյան Գ.Գ. Անձի ինքնագիտակցության հիմնախնդիրը, տեսական մոտեցումները և բնորոշումները հոգեբանության մեջ, Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, հումանիտար և հասարական գիտություններ N 1, 2025, էջ 262-269:

7. Sargsyan L., Petrosyan A., Stepanyan L., Hovakimyan G. Ethnopsychological features of retaumatization, International Psychological Applications Conference and Trends (InPACT) 2025, Budapest, Hungary, P. 566-570, https://doi.org/10.36315/2025inpact131

ОВАКИМЯН ГАРИК ГАГИКОВИЧ

СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПРОЯВЛЕНИЯ ЭТНИЧЕСКОГО САМОСОЗНАНИЯ ВОЕННОСЛУЖАЩИХ, УЧАСТВОВАВШИХ В ВОЙНЕ, В ПОСЛЕВОЕННЫЙ ПЕРИОД

Диссертация на соискание учёной степени кандидата психологических наук по специальности 19.00.03 «Социальная психология». Защита диссертации состоится 21-го октября 2025 года в 12^{00} на заседании специализированного совета 064 КВОН при Армянском государственном педагогическом университете имени Х. Абовяна (0010, г. Ереван, Тигран Меци 17).

РЕЗЮМЕ

Актуальность исследования обусловлена тем, что в поствоенных обществах происходят процессы социальной и психологической трансформации, включающие переоценку идентичности, переосмысление национальной идентичности и изменение социальных ролей. В этом контексте формирование, трансформация или кризисные ситуации этнического самосознания военнослужащих могут влиять как на индивидуальном, так и на групповом уровне, определяя их поведенческие предпочтения, уровень социальной интеграции и отношение к обществу.

Цель исследования: изучить социально-психологические проявления этнического самосознания военнослужащих, участвовавших в войне, в поствоенный период, а также их влияние на поведенческие модели, социальную интеграцию и ценностные ориентации.

Основные задачи исследования:

1. Анализировать концепции и подходы к самосознанию личности и этническому самосознанию в психологии.
2. Выявить особенности этнического самосознания в кризисных, военных и поствоенных условиях.
3. Изучить социально-психологические особенности этнического самосознания военнослужащих.
4. Проанализировать влияние войны на социально-психологическое состояние военнослужащих в поствоенный период.
5. Исследовать социально-психологические особенности этнического самосознания военнослужащих в поствоенный период.
6. Провести корреляционный анализ полученных результатов.
7. Разработать рекомендации по социальной интеграции и психологическому восстановлению военнослужащих в поствоенный период.

Гипотеза исследования: предполагается, что этническое самосознание военнослужащих, участвовавших в войне, в поствоенный период может проявляться в изменениях этнической идентичности, включая переоценку

принадлежности к этнической группе, собственного ролевого значения, изменением этнических установок, усилением патриотических чувств, изменением восприятия врага, переосмыслением этнических ценностей и идеалов.

Научная новизна исследования:

1. Изучаются социально-психологические проявления этнического самосознания военнослужащих, участвовавших в 44-дневной войне, в поствоенный период, выявляется их влияние на поведенческие модели, социальную интеграцию и ценностные ориентации.

2. Исследование по-новому рассматривает социально-психологические факторы изменений этнического самосознания, такие как чувство этнической идентичности, переоценка собственной роли в социальном контексте, усиление патриотических чувств и изменение восприятия врага.

3. Новизна заключается в изучении процесса переосмысления этнических ценностей и идеалов, а также анализа изменений в отношениях между этническими группами в посткризисном обществе.

4. На основе результатов исследования разработаны рекомендации, направленные на улучшение социальной адаптации и укрепление этнического самосознания военнослужащих в поствоенный период.

Теоретическая и практическая значимость исследования: изучение социально-психологических проявлений этнического самосознания способствует глубокому пониманию механизмов формирования, развития и проявления этнической идентичности с учетом взаимодействия социальных, культурных и психологических факторов. Результаты исследования могут быть использованы для разработки программ психологической поддержки военнослужащих, способствующих преодолению поствоенных травм. Данные могут применяться в образовательных учреждениях для разработки программ, развивающих этническое самосознание и толерантность. Результаты исследования полезны для государственных органов в разработке политики, направленной на решение социально-психологических проблем военнослужащих и укрепление национального единства.

Надежность и публичность исследования обеспечиваются анализом 131 научной работы современных ученых. Результаты диссертации были представлены в 7 научных публикациях и обсуждались на кафедре психологии имени академика М. Мазманяна ГПИ.

Структура диссертации: Работа состоит из введения, трёх глав, выводов и рекомендаций, списка использованной литературы и приложений.

HOVAKIMYAN GARIK GAGIK

SOCIO-PSYCHOLOGICAL MANIFESTATIONS OF ETHNIC SELF-CONSCIOUSNESS OF WHO PARTICIPATED IN WAR, IN THE POST-WAR PERIOD

Dissertation for the Degree of Candidate of Psychological Sciences in the specialty 19.00.03 - "Social Psychology". The dissertation defense will take place on October 21, 2025, at 12:00, at HESC 064 Degree-awarding Scientific Council session, at the Armenian State Pedagogical University named after Kh. Abovyan (17 Tigran Mets, 0010, Yerevan).

ABSTRACT

The relevance of the research is determined by the fact that post-war societies undergo complex processes of social and psychological transformation, including the re-evaluation of identity, the reinterpretation of national identity, and changes in social roles. Within this context, the formation, transformation, or crisis of servicemen's ethnic self-consciousness may affect both the individual and group levels, shaping their behavioral preferences, degree of social integration, and attitudes toward society.

The research aims to examine the socio-psychological manifestations of ethnic self-awareness among servicemen who participated in war, focusing on the post-war period, as well as their impact on behavioral patterns, social integration, and value orientations.

Research Objectives:

1. To analyze concepts of and approaches to self-awareness and ethnic self-awareness in psychology.
2. To identify the specific features of ethnic self-awareness in crisis, wartime, and post-war conditions.
3. To study the socio-psychological characteristics of servicemen's ethnic self-awareness.
4. To analyze the impact of war on the socio-psychological state of servicemen in the post-war period.
5. To investigate the socio-psychological features of ethnic self-awareness of servicemen in the post-war period.
6. To conduct a correlation analysis of the obtained results.
7. To develop recommendations for the social integration and psychological rehabilitation of servicemen in the post-war period.

Research Hypothesis:

It is assumed that the ethnic self-awareness of servicemen who participated in war may, in the post-war period, may be manifested through changes in ethnic identity, including a re-evaluation of belonging to an ethnic group, reconsideration

of one's own social role, transformation of ethnic attitudes, strengthening of patriotic feelings, shifts in the perception of the enemy, and the reinterpretation of ethnic values and ideals.

Scientific Novelty of the Research:

1. The study examines the socio-psychological manifestations of ethnic self-awareness among the 44-day war servicemen during the post-war period, identifying their impact on behavioral patterns, social integration, and value orientations.
2. The research offers a new perspective on the socio-psychological factors underlying changes in ethnic self-awareness, such as the sense of ethnic identity, the re-evaluation of one's role in the social context, the intensification of patriotic feelings, and the transformation of perceptions of the enemy.
3. The novelty lies in the analysis of the process of reinterpretation of ethnic values and ideals, as well as in the exploration of changes in interethnic relations within a post-crisis society.
4. Based on the findings, recommendations have been developed to enhance social adaptation and strengthen the ethnic self-awareness of servicemen in the post-war period.

Theoretical and Practical Significance of the Research:

The study of the socio-psychological manifestations of ethnic self-awareness contributes to a deeper understanding of the mechanisms of formation, development, and expression of ethnic identity, taking into account the interplay of social, cultural, and psychological factors. The research findings can be applied in the development of psychological support programs for servicemen, aimed at overcoming post-war trauma. The data may also be used in educational institutions for designing programs that foster ethnic self-awareness and tolerance. Furthermore, the results of the study are of value to state authorities in shaping policies addressing the socio-psychological challenges faced by servicemen and in strengthening national unity.

Reliability and Publicity of the Research:

The reliability of the study is ensured by the analysis of 131 scholarly works by contemporary researchers. The dissertation findings have been published in seven academic articles and discussed at the Department of Psychology named after Academician M. Mazmanyan at ASPU.

Structure of the Dissertation:

The work consists of an introduction, three chapters, conclusions and recommendations, a list of references, and appendices.